ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ

«24» հունվարի 2019 թվականի № 16-Ն

«ՄԵԴԻՍ-ՇԻՆ» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՄԵԴԻՍ-ՇԻՆ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 167-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությանը 2018 թվականի մայիսի 18-ի թիվ 03/29.4/2602-18 գրությամբ տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները վերացնելու վերաբերյալ: Զգուշացման մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունն ունի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված ընդերքօգտագործման վճարների մասով ապառքներ՝ 01.12.2017թ-ի դրությամբ պետական տուրքի մասով 1 827.3 (մեկ միլիոն ութ հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր) ՀՀ դրամ, ինչպես նաև Ընկերությունը սահմանված ժամկետներում լիազոր մարմին չի ներկայացրել 2017 թվականի 5-ՕՀՊ հաշվետվությունները:

Վարույթն իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից արձանագրվել է այն փաստը, որ լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը և ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 7-րդ կետերով և 61-րդ հոդվածով նախատեսված դրույթները, օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-399 պայմանագրի 3.4 կետի 3.4.7 ենթակետում և 5-րդ կետում նախատեսված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք: Ընկերությունը զգուշացման վերաբերյալ ծանուցումը ստացել է 2018 թվականի մայիսի 31-ին, սակայն զգուշացման հիմքերը վերացված լինելու փաստը հավաստող որևէ փաստաթուղթ նախարարության կողմից չի ստացվել:

2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 167-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ: Նախարարությունը պահպանելով օրենսդրությամբ սահմանված պահանջները՝ իրազեկել է Ընկերությանը վարչական վարույթի հարուցման և վարչական լսումների վերաբերյալ: Ընկերության կողմից վարչական վարույթի նիստերին մասնակցություն չի ապահովվել: Սույն վարչական վարույթը երկու անգամ երկարաձգվել է

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով և 6-րդ մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «ՄԵԴԻՍ-ՇԻՆ» ՍՊ ընկերության ՀՀ Արարատի մարզի Մեդիսի ավազի հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնել:

2. 2013 թվականի հունվարի 31-ի օգտակար հանածոների արդյունահանման թիվ ՇԱԹՎ-29/399 (նախկին 14/621) թույլտվությունը, լեռնահատկացման թիվ ԼՎ-399 ակտն ուժը կորցրած ճանաչել և լուծել օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ ՊՎ-399 պայմանագիրը:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) եռօրյա ժամկետում ծանուցել ընկերությանը ընդերքօգտագործման իրավունքը դադարեցնելու մասին.

2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

3) սահմանված կարգով ծանուցել նաև համապատասխան պետական մարմիններին:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումն՝ ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով և այն կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

6. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Վարդան Գևորգյանին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

1/24/2019

X

VERIFIED OCSP 24-Jan-19 12:06:08 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 32017703 1994

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ЭНЕРГЕТИКИ РА
MINISTRY OF ENERGY INFRASTRUCTURE AND NATURAL RESOURCES OF THE RA